

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ

Ամեն ժողովուրդ ունի իր սեփական ազգային-եկեղեցական տոները:

Հայ ժողովուրդն ալ ունի իր սեփական տոնը, իր լեզվի տոնը, իր մշակույթի տոնը, որը ավելի քան հազար վեց հարյուր տարիներ կմնա անփոփոխ մինչև այս լուսավոր օրերը:

Հայ ժողովուրդին Աստված անտես չէ ըրած և անոր տված է ռահվիրաներ, որոնք ժողովուրդի ծոցեն ծնվելով, նախախնամական դեր կատարած են և կրցած են ալիքներու մեջ տատանվող հայ ժողովուրդի նավը իր խաղաղ ափունքը հասցնել:

Այդ ռահվիրաներեն մեկն է՝ Ս. Մեսրոպ Մաշտոց, որ իր աչքերը լույսին բացավ 1600 տարիներ առաջ, որպեսզի մեր ժողովուրդի հոգին լույսին առաջնորդե: Մինչև Մեսրոպ Մաշտոց թեև Հայաստան աշխարհ քրիստոնյա դարձած էր, բայց Հայ Եկեղեցին տակավին հայացած չէր, որովհետև չուներ սեփական գիր ու գրականություն: Ամբողջ դար մը՝ ասորի և հույն եկեղեցականներ հրավիրվեցան ծառայելու մեր եկեղեցիներուն մեջ: Այդ վիճակեն փրկելու համար Հայ Եկեղեցին, մեր նախահայրերը մտածեցին որ անհրաժեշտ է որպեսզի հայ ժողովուրդը ունենա իր գիրն ու գրականությունը և Ս. Գիրքը թարգմանվի հայերեն լեզվով:

Այդ օրերուն կային երկու նշանավոր դեմքեր՝ Վռամշապուհ թագավոր և Սահակ կաթողիկոս, որոնք խորհեցան սեփական գիր ու գրականություն ստեղծելու մասին: Անոնք փնտրեցին և գտան այն հանճարեղ վանականը, որ եղավ Ս. Մեսրոպ Մաշտոց՝ փրկելու հայ ժողովուրդը ո՛չ միայն իր ժամանակաշրջանի, այլ բոլոր դարերուն համար, որ հաջորդեցին:

Հոկտեմբեր ամիսը նվիրական է Հայ Եկեղեցվո համար: Այդ ամսվան կզուգադիպի Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդի մեծագույն տոներեն մեկը՝ Թարգմանչաց տոնը: Թարգմանչաց վարդապետներու կատարած գործը, թափած քրտինքը չպետք է փնտրել միայն թարգմանությանը մեջ, այլ այն ճիգին մեջ, որով անոնք պայծառացուցին Հայ Եկեղեցին, օժտեցին զայն իր սեփական լեզվով, իր զմայլելի շարականներով և պայծառացուցին հայ ժողովուրդի հոգին:

Թարգմանչաց տոնը հայ ժողովուրդին հոգիին պանծացման ցնծատոնն է: Թարգմանիչ վարդապետներուն հաջորդ դարերուն ունեցանք անոնց գործը շարունակող փայլուն դեմքեր, ինչպես՝ Անանիա Ծիրակացին, Գրիգոր Նարեկացին, որ մեր հոգին բարձրացուց դեպի Աստված և մեզի սորվեցուց Աստուծո հետ զրույցի նստել: Իսկ ավելի հետո Ներսես Շնորհալին մեզի սորվեցուց Աստուծո փառքը երգել:

Նույնքան նվիրական է հոկտեմբեր ամիսը մեզի համար, որովհետև այդ ամսվան կզուգադիպի նաև Հայոց Հայրապետի գահակալության տարեդարձը: Այս զուգադի-

պության մեջ ամբողջ խորհուրդ մը կա: Վեհարիան Հայրապետի գահակալության շրջանին նոր վերածնության շրջան մը կը բացվի Մայր Աթոռի տարեգրության մեջ և Ս. Էջմիածնի միջավայրին ներս:

Հազար ու հազար փոթորիկներ անցան հայ սրտի, հայ հոգի վրայեն, և ոչ մեկ փոթորիկ, ոչ մեկ գերություն չկրցան իջել հայ ժողովուրդի հոգիեն իր սեփական մայրենի լեզուն և իր արյունով գնված հավատը քրիստոնեական, որ մենք մեր պապերեն կտակ և պատգամ ընդունեցինք:

Մեր հավատքի տաճարներուն մեջ ամփոփված այսօր, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, բովանդակ հայ ժողովուրդը կոգեկոչե իր մշակույթի փառքը: Որովհետև, կհավատանք մեծ իմաստունի մի խոսքին, որ ժողովուրդի մը հոգեկան կյանքը կսկսի իր այբուբենով:

Այսօր թարգմանչաց տոնի առթիվ մենք կխոնարհինք և կոգեկոչենք անոնց լուսավոր, անկորնչելի հիշատակը: Անոնք մեզի կտակ ձգեցին չհեռանալ, չբաժնվիլ մեր մայր հայրենիքեն, մեր ս. Եկեղեցիեն, որ եղած է ծննդավայրը հայ լեզվին ու հայ մշակույթին:

Թարգմանչաց վարդապետներու ոգեկոչման հիշատակին առջև այսօր մեզի կմնա աղոթել և մաղթել, որպեսզի Թարգմանչաց ոգին և անոնց շնորհները ինչպես անցյալի մեջ, նաև այսօր և վաղը և հավիտյանս հավիտենից մեզի հետ մնան և ամեն տեղ ճառագայթեն ի փառս մեր ազգին:

ՏԻՐԱՑՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆ

Քարոզ՝ խոսված Մայր տաճարում, հոկտեմբերի 11-ին: